ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կանայք և մարդասիրական ճգնաժամը Հայաստանում. պատերազմի և համավարակի մարտահրավերները

Ազգային ժողով-Քաղաքացիական հասարակություն համագործակցության հարթակի հանդիպում

Դեկտեմբերի 4-ին տեղի ունեցավ Ազգային ժողով-Քաղաքացիական հասարակություն համագործակցության հարթակի առցանց հանդիպումը **«Կանայք և մարդասիրական ճգնաժամը Հայաստանում. պատերազմի և համավարակի մարտահրավերները»** թեմայով:

Նախաձեռնությունն *իրականացվել է «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագիրը համահրականացվում է ՕքսԷՋԷՆ հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Ժողովրդավարության Վեսթմինսթր հիմնադրամի հետ՝ ՀՀ Ազգային ժողովի հետ համագործակցությամբ: Ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության ֆինանսական օժանդակությամբ:*

Հանդիպման նպատակը

- Քննարկել պատերազմի և համավարակի հետևանքներով պայմանավորված հումանիտար ճգնաժամի հիմնախնդիրները, դրանց հաղթահարման ուղիներն

ու առաջարկները՝ ՔՀԿ-ների, Ազգային ժողովի պատգամավորների և գործադիր իշխանության ներկայացուցիչների մասնակցությամբ:

- Ներկայացնել խնդիրները, որոնց բախվում են կանայք մարդասիրական ճգնաժամի հետևանքով և նրանց դերն այդ խնդիրների հաղթահարման ուղղությամբ:

Իրավիճակի գնահատականը

Ս.թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծված պատերազմի հետևանքով առաջացած հումանիտար ճգնաժամը անհապաղ լուծումներ է պահանջում: Պետական կառույցներն ու հանրությունն առերեսվել են այսօր Արցախից տեղահանված և Հայաստանում ապաստան գտած, պատերազմի դաշտում իրենց հարազատներին կորցրած, անհայտ կորած և գերեվարված զինվորների հազարավոր ընտանիքների հիմնախնդիրներին: Ռազմական գործողությունների դադարեցման մասին եռակողմ հայտարարությունից հետո հանրապետության մի շարք սահմանամերձ շրջանների բնակիչները հայտնվել են հայ-ադրբեջանական սահմանների դեմարկացիայի հետ կապված անորոշ ու տագնապալի իրավիճակում: Հումանիտար ճգնաժամի մաս են կազմում նաև COVID-19 համավարակի ահագնացող վտանգները, որոնք նույնպես հրատապ և համակարգված լուծումների են սպասում:

Ճգնաժամից դուրս գալու, երկրում կայունությունն ու անվտանգությունն ապահովելու, հասարակության մեջ բարոյահոգեբանական մթնոլորտը վերականգնելու և հումանիտար աղետը կանգնեցնելու խնդիրները միասնական ջանքեր են պահանջում և խորհրդարանից, և քաղաքացիական հասարակությունից: Այս համատեքստում հատկապես կարևորվում է կանանց դերը: Պատերազմների հետևանքների և հումանիտար ճգնաժամերի կործանարար ազդեցությունը հատկապես կանանց ուսերին է ծանրանում, և միաժամանակ, ինչպես ցույց են տալիս հայ ժողովրդին բաժին ընկած բոլոր պատմական փորձությունները, կանայք են, որ իրենց մեջ ուժ են գտնում վերապրելու մարդկային դաժան կորուստների ցավը, դիմակայելու աղետներին, պայքարելու ամենօրյա դժվարությունների դեմ: Այսօր, երբ հոգեբանական ծայրահեղ ծանր վիճակում գտնվող հանրությանն առավել քան երբևիցե, միմյանց աջակցելու, ապրումակցելու, պարտությունը, վիշտն ու կորուստը միասին հաղթահարելու շուրջ համախմբում է անհրաժեշտ, կանայք կարող են դառնալ այդ միավորող ու նախաձեռնող ուժը, որն ապրելու և արարելու հույս կհաղորդի բոլորին:

Հանդիպման ընթացքը

1. **Մարդասիրական ճգնաժամի հաղթահարման հնարավոր ուղիները զինադադարի համատեքստում:**
   - ՔՀԿ գործընկերների կողմից բարձրաձայնվեցին այն հիմնական բացերն ու խնդիրները, որոնց նրանք բախվում են հումանիտար ճգնաժամի հաղթահարմանն ուղղված ծրագրեր ու նախաձեռնություններ

իրականացնելիս: Գործադիր իշխանության կողմից հարցերին պատասխանեց Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Աննա Ժամակոչյանը:

2. **Խորհրդարանի դերը հումանիտար ճգնաժամը հաղթահարելու գործում**

Հարցը քննարկվել է ԱԺ-ՔՀԿ համագործակցության հարթակի և խորհրդարանական կառավարման համակարգի տրամաբանության շրջանակներում.

- ՀՀ «Լուսավոր Հայաստան» խմբակցության պատգամավոր Անի Սամսոնյանը ներկայացրեց պատերազմական գործողությունների դադարից հետո իրենց նախաձեռնությունները հումանիտար աղետը հաղթահարելու ուղղությամբ, մասնավորապես իրենց խմբակցության հեղինակած օրենսդրական փաթեթը անհետ կորածների և գերության մեջ գտնվող հայրենակիցների համար սոցիալական խնդիրները կարգավորելու նպատակով:
- ՔՀԿ-ները ներկայացրեցին իրենց ակնկալիքները կապված հատկապես կին պատգամավորների հետ՝ քաղաքական լարվածությունը մեղմելու և քաղաքական երկխոսության մթնոլորտն ապահովելու առաքելության, ինչպես նաև ճգնաժամերը կառավարելու և հաղթահարելու ՀՀ Ազգային ժողովի գործառույթի համատեքստում: Շեշտադրվեց հումանիտար ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ Ազգային ժողով – Կառավարություն - ՔՀԿ-ներ արդյունավետ համագործակցության անհրաժեշտությունը:

3. **Առաջարկներ խորհրդարանին. համավարակը և գենդերային հիմնախնդիրները**
   - Ներկայացվեց «Կանայք համավարակի դեմ պայքարում» թեմայով ՀԱՎԱՍԱՐ տեղեկագրի հատուկ համարը, որն անդրադառնում է COVID-19-ի ազդեցության գենդերային առանձնահատկություններին և խորհրդարանի դերին համավարակի դեմ պայքարում:

Քննարկման առանցքային հիմնախնդիրները

I. **Պատերազմի հետևանքների հետ կապված հումանիտար ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ ՔՀԿ-ների կողմից բարձրաձայնվել են հետևյալ հիմնախնդիրները.**

- Արցախից ժամանած հայրենակիցների վերաբերյալ համակարգված տվյալների բազայի բացակայություն, կարիքների համակողմանի գնահատման ամբողջական բազայի բացակայություն, իրականացվող աջակցության ծրագրերի քարտեզագրման բացակայություն:
- Արցախից տեղահանված անձանց տվյալների պաշտպանության մեխանիզմների անհրաժեշտություն, մասնավորապես, այսօր սոցիալական աջակցությունից

օգտվող, շահառու հանդիսացող անձանց տվյալները հայտնվում են համացանցում, խախտվում է անձնական տվյալների գաղտնիության սկզբունքը:

- Արցախում իրենց բնակավայրերը կորցրած հյուրընկալող ընտանիքների աջակցության հետ կապված հիմնախնդիրներ, մասնավորապես, դեկտեմբերի 3-ին Կառավարության կողմից ընդունված՝ հյուրընկալների աջակցության նախագծի մանրամասները, բացթողումներն ու խոչընդոտները:
- Ճգնաժամի արդյունքում տուժածների, այդ թվում կանանց և երեխաների կարիքների գնահատման բացակայություն, համապատասխան ուսումնասիրությունների անհրաժեշտություն:
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ստեղծված 114 թեժ գծի ծառայության հասանելիության հետ կապված խնդիրներ, պաշտոնական տեղեկատվության պակաս, այդ թվում՝ նախարարությունների պաշտոնական կայք էջերում, ինչի հետևանքով աջակցության կարիք ունեցող մարդիկ լրացուցիչ սթրեսի են ենթարկվում անորոշության, տարատեսակ և իրարամերժ տեղեկատվության պատճառով:
- Սոցիալական աջակցության ծրագրերի հասանելիության խնդիրներ, մասնավորապես այն մարդկանց համար, ովքեր ապրում են Արցախում (օր. Քաշաթաղի շրջանում), սակայն ունեն Հայաստանի Հանրապետության անձնագրեր և այդ պատճառով չեն կարող օգտվել սոցիալական աջակցությունից:
- Հատուկ ուշադրության անհրաժեշտություն հաշմանդամություն ունեցող տարհանված անձանց և այն ընտանիքների նկատմամբ, ովքեր ունեն հաշմանդամություն ունեցող անձինք:
- Հատուկ ծրագրերի անհրաժեշտություն Արցախի քաղաքային բնակավայրերի բնակիչների համար (օրինակ, Շուշիից, Հադրութից տեղահանված), ովքեր չունեն մշտական բնակություն, սակայն ունեն իրենց մասնագիտական հմտություններն իրացնելու, մշտական աշխատանքով ապահովելու խնդիր (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից միայն ժամանակավոր լուծումներ են առաջարկվում):
- Հատուկ վերաբերմունք է պետք ցուցաբերել այն ընտանիքներին, որոնց անդամներն անհայտ կորած են: Արձանագրվել են դեպքեր, երբ անհետ կորած անձանց ազատել են աշխատանքից, ծառայությունից և ընտանիքները լուրջ սոցիալական խնդիրների առջև են կանգնում:
- Համավարակի և պատերազմի հետևանքով աղքատության ցուցանիշների վատթարացում, կանանց ներուժի ներգրավմամբ նպատակային ծրագրերի իրականացում, որպես աղքատությունը հաղթահարելու արդյունավետ միջոց:

II. Համավարակի հետ կապված ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ ներկայացվեց «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում պատրաստված ՀԱՎԱՍԱՐ տեղեկագրի «Կանայք համավարակի դեմ պայքարում» հատուկ համարը, որի շրջանակում անդարադարձ է կատարվել համավարակի դեմ պայքարում խորհրդարանի դերին:

Ուսումնասիրությունները փաստում են, որ համավարակն ազդում է բոլորի վրա և ամենուր, սակայն մարդկանց տարբեր խմբերի վրա ազդում է տարբեր կերպ՝ խորացնելով առկա անհավասարությունները և բացահայտելով սոցիալական, քաղաքական ու տնտեսական համակարգերի խոցելի տեղերը: Ըստ փորձագիտական գնահատականների, COVID-19-ը սոցիալ-տնտեսական բնույթի ավերիչ ազդեցություն է ունենում հատկապես կանանց վրա, ինչպես նաև բացասաբար է ազդում այն առաջընթացի վրա, որը մինչ այժմ արձանագրվել էր գենդերային հավասարության ու կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Այս առումով կարևոր է, որ կառավարությունների արձագանքները համավարակին ի սկզբանե հաշվի առնեն այն անհամաչափ ազդեցությունները, որ դրանք ունենում են կանանց ու տղամարդկանց վրա: Իսկ այն հանգամանքը, որ ողջ աշխարհում կանայք՝ մեծամասնություն կազմելով առողջապահության, կրթության, սոցիալական ծառայությունների ոլորտներում, գտնվում են համավարակի դեմ պայքարի առաջնագծում և կարևոր դեր են խաղում ճգնաժամի լուծման գործում, միայն հաստատում է, որ համավարակն ու դրա հետևանքները հաղթահարելուն ուղղված ցանկացած միջոցառում պետք է ներառի գենդերային զգայուն մոտեցումներ:

Տեղեկագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- Ինչ հատուկ ազդեցություն ունի համավարակը կանանց վրա
- Ուղեցույց խորհրդարանների համար. COVID-19-ը և գենդերային հիմնախնդիրները
- Ինչո՞ւ է կարևոր սեռով տարբերակված վիճակագրությունը
- Կանայք համավարակի դեմ պայքարի առաջնագծում
- Համավարակի տնտեսական հետևանքները
- Ընտանեկան բռնությունը՝ ստվերային համավարակ
- Կին առաջնորդներն ընդդեմ համավարակի. հաջողության գաղտնիքը
- Համատեղ գործողությունների ժամանակն է

Առաջարկություններ

- Քայլեր ձեռնարկել բոլոր շահագրգիռ պետական և հասարակական կառույցների հետ արդյունավետ համագործակցություն ծավալելու ուղղությամբ՝ համակարգված տվյալների բազայի, կարիքների գնահատման և տեղեկատվական միասնական կենտրոնի ստեղծման նպատակով, որը հնարավորություն կտա օպերատիվ տեղեկատվություն տրամադրել և նպատակային ու հասցեական օգնություն ցույց տալ պատերազմական գործողություններից տուժած բոլոր թիրախային խմբերին, այդ թվում՝
    - Արցախից տարհանված ընտանիքներին
    - Արցախ մեկնող ընտանիքներին
    - Պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած անձանց
    - Պատերազմի հետևանքով երեխա/ներ, ընտանիքի անդամ/ներ կորցրած ընտանիքներին

- Զոհված զինծառայողների և կամավորների ընտանիքներին
- Անհետ կորածների ընտանիքներին
- Գերության մեջ գտնվող անձանց ծնողներին, հարազատներին և այլ տուժածներին:

- Ապահովել ԱԺ- Կառավարություն- ՔՀԿ-ներ արդյունավետ համագործակցության կայացումը՝ հումանիտար ճգնաժամը հաղթահարելու, այդ թվում Արցախից տեղահանված ընտանիքներին, պատերազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած, գերեվարված և զոհված զինժառայողների ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու և համավարակի դեմ պայքարելու ուղղությամբ:
- Իրականացնել Ազգային Ժողովի վերահսկողական գործառույթը՝ պատերազմական գործողություններից տուժածների միասնական բազայի ստեղծումը և աջակցության ծրագրերի հասցեականությունն ապահովելու ուղղությամբ:
- Ներգրավել ՔՀԿ-ների ներուժը պատերազմական գործողություններից տուժած մարդկանց կարիքների գնահատման և աջակցող նախաձեռնությունների քարտեզագրման հետազոտություններ անցկացնելու հարցում:
- Նախաձեռնել արդյունավետ երկխոսություն ՀՀ Ազգային ժողովում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի միջև՝ կառավարման ճգնաժամից դուրս գալու և հումանիտար աղետը կանխելու ուղղությամբ:
- Հանդես գալ նախաձեռնություններով և քաղաքական հայտարարություններով՝ ուղղված հասարակության համախմբմանը և բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմանը, օգտագործելով քաղաքական թիվ մեկ ամբիոնն ատելության խոսքի, պառակտման կեղեքիչ գործընթացի՝ սևերի ու սպիտակների, հների ու նորերի, հերոսների ու դավաճանների արհեստական բաժանարար գծերի վերացման նպատակով:
- Օգտագործել խորհրդարանական դիվանագիտության բոլոր միջոցներն ու հնարավորությունները՝ հայ գերիներին անհապաղ վերադարձնելու, անհայտ կորածների որոնման աշխատանքները կազմակերպելու, Արցախում Ադրբեջանի կողմից կատարված ռազմական հանցագործությունները դատապարտելու, հայ մշակութային ժառանգությունը ոչնչացումից փրկելու և Արցախի հանրապետության ինքնորոշման իրավունքը ճանաչելու նպատակով:
- Ուժեղացնել Խորհրդարանի դերը համավարակի և դրա հետևանքների դեմ պայքարում:

Ամփոփաթերթը պատրաստվել է ՄԹ կառավարության ֆինանսական աջակցությամբ, այնուհանդերձ արտահայտված տեսակետները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԹ կառավարության պաշտոնական դիրքորոշման հետ: Փաստաթղթում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տեսակետների հետ: